

ՏԱՏԵԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԻ ԽՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԱՅՑԵԼԵԼ ԵԼ ԴՊՐՈՑՆԵՐ



Արցախի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի մի խումբ ուսանողներ քուղայրոց համագործակցության շրջանակում այցելել են Ստեփանակերտի Անդրեյ Սախարովի անվան համար 8 և 4. Զահանգիրյանի անվան համար 11 ավագություններ:

ԱՐԴՅՈՒՆԱԴՐԵՐԸ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԶՈՐԱՄԱՆ

Դեկտեմբերի 4-ին ԱրՊԴ ուսանողական խորհրդի, ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի բաժնի նախաձեռնությամբ մի խումբ ուսանողներ համերգային ծրագրով և նվերներով այցելել են Սատաղիսի և Թալիշի գորամասեր, ինչպես նաև Սատաղիսի մաճկապարտեզ ու դպրոց:

«Չկա ավելի հաճելի քան, քան մանկան
ինքնամոռաց ծիծաղն ու զինվորի գեղեցիկ
ժպիտը: Աշակերտ-ուսանող-զինվոր ամուր
կապն է մեր անկախության և հասարակական
բարձր ինքնազնահատականի իրական և
քանկ երաշխավորը: Թե ինչպիսի զգացողու-
թյուններ և ապրումներ ունեցան և ուսանող-
ները, և երեխաները, և զինվորները, բառերով անհ-
նար է նկարագրել: Մեր նպատակն էր ուրախության
բոպեմներ պարզեցնել մեր զինվորներին», -ասում է
լրագրություն 1-ին կուրսի ուսանողուհի Ասպրամ
Ավանեսյանը և հավելում, որ ուսանողների՝ օրվա
առաքելությունը կատարվել է, զինվորների ուրախ
տրամադրությունը ապահովված էր:

«Այգելության սկզբում կարծես ուսանողներին



պատել էր անսովոր վախ, որ հաշված կիլոմետրեր այն կողմ թշնամին է, բայց թվացյալ վախը միանգամից հօդս ցնեց այն բանից հետո, երբ տեսանք մանկապարտեզի, դպրոցի երեխաներին և իհարկե մեր օրվա պաշտպաններին, մեր վեհ ու հպարտ զինվորներին», -ասել է Ա. Ավանեսյանը:

Ուսանողները հանդես են եկել ասմունքով,
երածշտական ու պարային համարներով և նվերներ
հանձնել օրվա հերոսներին:

«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՍԱՀԱՐԱԿԱՆ ՈՒՍՏՈՂԱԿԱՆ ԱՍՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ԱԱՊԱԶՅ
Դամարի պատրասխանաւ
Ելինա Դակորյան,
լրագրություն 3-րդ կու

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի
պետական համալսարանի
հրատարակչության
տպագրանում
ՍԵՐ ԽԱՆՈՑԵՑ Ա.ԳՈՂՅԻ 5:
Երևան (017) 91-01-91

A photograph of a white clock face with black numbers and hands. The hands are red and point to approximately 10:10. To the right of the clock is a large, ornate, black, cursive-style graphic of a hand holding a pen or brush. Below the hand, the text "Բո ժամանակը" is written in a large, flowing script font. To the right of the main title, smaller text reads "№ 9 ԴԵԿԵMBER 2019".

ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՍՍԱԹԵՐԹ

**ԱՅՀ ԲՈՒԺԻ ՔԻՍԱԿԱՆ ԶԵՂՔԵՐՈՒՄ ԹՈՂԱՐԿՎԱԾ
ՇՐՋԱՆԱԿԱՐՏՆԵՐՆ ԵՆ, ՈՐՈՆՔ ԻՐԵԼՑ ՆՊԱՍԸ ԿԲԵՐԵԼ ՄԵՐ
ՔԱՅՐԵԼԻՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ ՔՁՈՐԱՑՄԱՆ**

Արցախի մայր բուիի հոբելյանի առթիվ գրուցել ենք բուիի նախկին ռեկտոր Մանուշ Սինայանի հետ, ով բուիը ղեկավարել է 2013-2018թթ.: Դետաքրքիր է նրանից իմանալ բուիի անցած ծանապարհի և զարգացման հեռանկարների մասին: Այս և այլ թեմաներով է մեր գրույցը Մ. Մինայանի հետ.

-Տիկին Սինասյան, ինչպե՞ս կգնահատե-
իք Արցախի մայր բուիի անցած կեսդարյա-
ռութիղ:

- Եիսուն տարին համալսարանի համար պատկառելի տարիիք չէ: Անժխտելի փաստ է, որ արցախահայությունը միշտ էլ ընդգծված վերաբերմունք է ունեցել կրթության և գիտության նկատմամբ, միշտ էլ ձգտել է ունենալ կրթական ու գիտական միտքը գեներացնող ու տարածող կրթօջախ: Այդ ցանկությունն իրականացավ, երբ բացվեց Արցախի մայր բուհը, որը դարձավ բարձրագույն կրթության լավագույն ավանդույթների կրողն ու շարունակողը:

Դժվար ու երկար կայացման փուլ է անցել համալսարանը՝ այդ ծանապարհին փառքով կատարելով իր ազգապահանքարձր առաքելությունը։ Ուստի ոչ մի սերունդ իրավունք չունի անտեսել ու իր նախատող չըեռել մարդ բուհի առոաամանո։

-Զեր պաշտոնավարության ընթացքում
ինչպիսի՞ հաջողություններ և ծեռքբերում-
ներ է ունեցել որուիր:

- Հպարտ եմ, որ ինձ բախտ է վիճակվել մասնակցել Արցախի պետական համալսարանի զարգացմանը: Աշխատել եմ իրագործել իմ նախընտրական ծրագրի դրույթները, կարծում եմ, հիմնականում հաջողվել է: Ամենամյա աշխատանքի հաշվետվությունները հրապարակվել են:

Յավում եմ, որ ռեսուրսային (մարդկային, նյութական, տեխնիկական և այլ) լուրջ



Աերարկումների բացակայության և այլ օր-
յեկտիվ պատճառներով չի հաջողվել որա-
կական էական տեղաշարժ արձանագրել:

Դիմական ձեռքբերումը, թերևս, թողարկված շրջանավարտներն են, որոնք իրենց նպաստը կրերեն մեր հայրենիքի զարգացմանն ու հզորացմանը:

-ի՞նչ բարեմաղթանքներ ունեք և որո՞նք
են, ըստ Ձեզ, համալսարանի զարգացման
հերախնակություն:

-Արցախի պետական համալսարանին
մաղթում եմ կայուն գարգացում: Ազգային
արժեքների պահպանության գործը միայն
համալսարանի ղեկավարության և կոլեկտի-
վի խնդիրը չէ, այն հաջողությամբ ի կատար
կածվի, եթե դրան նվիրվի Արցախում բարձ-
րագույն կրթության ռազմավարական նշա-
նակությունը գիտակցող յուրաքանչյուր
հայ, անկախ նրա ապրելու վայրից: Վստահ
եմ, որ համալսարանը զարգանում է ճիշտ
ուղղվ և տարիներ անց մենք կունենանք մեր
երաժանակագործություն:

Դարձագրույցը՝ Նանե
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ,
ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ Յ-ՐԴ ԿՈՒՐՍ

ՀԱՌՈՎԱՆԻ ՏՈՒՆԻ ԶԱՐԴԱՐԵԼՈՒՑ ԱՌԱՋ ՆԱԽ ԶԱՐԴԱՐԵԼ ՄԵՐ ՅՈԳԻՆԵՐԸ



Սոտենում է 2019-ին հրաժեշտ տալու պահը, և մարդիկ ակամայից սկսում են հետ տալ իրենց մտքի ժապավենը, մտովի աչքի անցկացնել անցած տարին՝ կատարածն ու չկատարածը, հասցրածն ու չհասցրածը, լրացրածն ու բաց թողածը: Նոր տարին պատրվակ է՝ իմքներս մեզ գոնե տարին մեկ անգամ հաշվետու լինելու, մեր սխալներից դասեր քաղելու, ապագայի լուսավոր ժրագրեր կազմելու համար:

ինձ և բոլորին: Եկեք զգանք տոնի մեջ խորհուրդը, այն չլցնենք արհեստական ցուցադրություններով, սեղանների մրցավազքով և ձևական բարեմաղթանքներով: «Ծնորհավոր Ամանոր» բարեմաղթանքը կարծես ընդունակ քաղաքավարության մի դրսկորում է, այն արտասանվում է առանց նրա մեջ ոգի և սեր դնելու, այն չի բխում սրտի խորքից, այլ ընդամենը լեզվի ժայրին է:

Եկեք այս Ամանորին ինքներս մեզ համոզենք, պար-

Կուգենայի մի քանի ամա- տադրենք ուղղվել, լինել իս-
նորյա խորհուրդներ հղել կական, փոխենք մեզ ու մեր

աշխարհը: Ամանորյա բազմապիսի գարդարանքներ գնելիս եկեք չմոռանանք մեր հոգու համար ևս գնելորանք (չնայած դրանք գնելի չեն), գարդարենք մեր հոգիները բարությամբ: Չմոռանանք տոնածառ գարդարելուց առաջ նախ զարդարել մեր հոգիները: Սեղանին պես-պես ուտելիքների հետ չմոռանանք դնել մեր հոգին ու սերը: Յի՞ն առարկաների հետ եկեք տնից դուրս նետենք մեր վատ մտքերն ու չար նախանձը: Տաք-տաք վառարանների ջերմությունը չի տաքացնի մեր տունը, եթե ինքներս մեր մեջ չունենք մի փոքրիկ «վառարան», որը ջերմություն, սերու հոգատարություն է ճառագում մեր մտերիմներին:

Նոր տարին մեծ հույս է,
հույս, որ առավոտյան
կարքնանանք, և ամեն ինչ
կակսվի նորից: Այս մեր 365
էջից բաղկացած գոքի առա-
ջին էջն է, եկեք այն գրենք
գեղեցիկ, միայն գունավոր
գրիշներով, գրենք մեր դժ-
վարին, բայց և սպասված
հաղթանակների մասին, մեր
հաջողությունների, բերկրա-
լի պահերի, ձեռքբերումնե-
րի, մեր մեծ սիրո, հավատա-
րիմ ընկերության, խաղաղ
ու լուսավոր երկրի մասին:

Ծնորհավոր գալիք Ամա-
նոր և Սուրբ ծնունդ:

Լուսինե Օհանջանյան,
այցը լ. և գրակ., 2-րդ կուրս

ԱՆՍ ԳՅՈՒՂԻ ՀՐԱՄԱԼԻՔՆԵՐԸ



Սոս գյուղը Մարտունու շրջանի ամենամեծ գյուղերից մեկն է: Գյուղն իր անվանումը ստացել է սոսենի ժառից, որն այդ տարածքում տնկել էր մի խիզախ զորավար: Գյուղի խորհրդանիշը «Կարմիր քար» սրբավայրն է, որը գտնվում է գյուղի բլրի գագաթին և այնտեղից միշտ հսկում է սոսեցիներին:

Վերջերս գյուղի բարերարների շնորհիվ
բարեկարգվել է գյուղից դեպի սրբավայր
տանող ճանապարհը, որից հետո էլ սրբա-
վայրում բարձրացվել Արքախի Հանրապե-
տության դրոշը: Տեղանքում կատարվել են
պեղումներ, որոնց արդյունքում հայտնա-
բերվել է եկեղեցի՝ արդեն հողի տակն ան-
ցած, սակայն եկող տարի նախատեսվում են
ավելի մեծամասշտաբ ուսումնասիրություն-
ներ: Դենց այս բլրակի լանջից էլ սկսում են
սոսեցիների գեղեցիկ տների շարանները:
Բլրի պատճառով արևը գյուղն ուշ է տա-
քացնում, իենց դրա համար էլ գյուղացինե-
րին անվանում են «Անծագ սոսեցիներ»:
Դեռվից գյուղին նայելիս այնպիսի տպավո-
րություն է, ասես գյուղը հիմնված է խոր
փոսի մեջ:

Սոս գյուղը հատկապես առանձնանում է գինեգործությամբ: Սոսեցիների պատրաստած գինիները արդեն իսկ շատերին է հայտնի: Սոսը համարվում է Արցախի՝ բբե-

նու ամենամեծ այգիներ ունեցող գյուղը: Սոսից ընդամենը յոթ կիլոմետր հեռավորության վրա է գտնվում Ամարաս եկեղեցին: Ամարասը տեսնելու համար աշխարհի տարբեր ծայրերից տարեկան բազմաթիվ զբուսաշրջիկներ են այցելում Արցախ: Գյուղն ունի նորակառույց դպրոց և մանկապարտեզ, գյուղում կա արվեստի դպրոց, որը երեխաներին հնարավորություն է տալիս զբաղվել իրենց նախասիրություններով: Չնայած ն` տեղացիներն աշխատանքի երբեմն մեկնում են արտերկիր: Հրանի Սոս գյուղի համայնքան Գրիգորյանը նշում է, որ գյության թվաքանակը վերջին հինգ վակածքով աճել է մոտ 35 հոգով, թյամբ գյուղն ունի 1086 բնադրեն ունի հստակ պլանավորած որոնց շնորհիվ գյուղացիները շխատանք: Կան հետևյալ ծրագրերի վերամշակման արտադրացում, տուրիզմի զարգացում՝ սում եղած պատմական վայրեամենի իրականացման գործում ։ Կառավարությունը: Նա նաև է խոսում այն մասին, որ գյուղաշխատանքի արդյունքում պատեհ է խմիչքեղենը, թե՛ չոենենը և մթերքները չեն արտահանվում, ա արտահանման շուկա և մեծ է նոհոր:

այս ամենին՝ Կարմիր քարի օրի-
նքո գյուղացիները շարունակում
լ, ստեղծել ու արարել շնորհիվ
ատասիրության և հայրենի հո-
ներով ամուր կառչած լինելու
։

Մոնիկա ՕՉԱՆՁԱՆՅԱՆ,
Լրագրություն 1-ին կուրս

ԱՐՊՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԻԶՈՑԱՌՈՒՄ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԵՂԻԾԵ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ ՀԱՍԱՐ 7 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ



Նոյեմբերի 4-ից 30-ը ԱրՊՅ մանկավարժություն և սպորտ ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» 3-րդ կուրսի ուսանողները փորձություն են անցել Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան համար 7 հիմնական դպրոցում:

Նշենք, որ սա կիրառական փորձություն է:

ՍՊԱՏԱԿԸ ԱՄՐԱՊՆԵԼ ԳԻՐՔ-ԸՆԹԵՐՑՈՂ ԿԱՊԸ



Դեկտեմբերի 4-ին Արցախի մայր քուի հիմնադրման 50-ամյակի առթիվ կայացել է «Գուշակիր գրողին» խորագրով ինտելեկտուալ-ծանազողական խաղ: Արցույթը նախաձեռնել են բանասիրական ֆակուլտետի ուսանողուհիներ Սոնա Սուսայելյանը և Նատա Սուսայելյանը, որին մասնակցում էին ֆակուլտետի տարրեր մասնագիտության ուսանողներ:

Մրցույթը կայացել է 3 փուլով, որի ըն-

մեջ այդ նրանք անցել էին ուսումնաճանաչողական փորձություն: Փորձությունն ավելի տպավորիչ դարձնելու համար ուսանողները կազմակերպեցին ինտելեկտուալ խաղ-մրցույթ՝ նվիրված Մոնթ Մելքոնյանի 62-րդ տարեդարձին: Խաղ-մրցույթը անց է կացվել 3-րդ դասարանցիների միջև՝ աշակերտներից բաղկացած «Աստղիկներ», «Պայծառամիտներ», «Գիտունիկներ», «Հնարամիտներ» և «Ծագող Արեգակ» թիմերի մասնակցությամբ: Խաղ-մրցույթը անցավ շերմ մթնոլորտում, աշակերտները պարգևատրվեցին պատվոգրերով: Ծնորհակալական խոսքով հանդես եկան փորձությունը դեկտեմբերի Ռոզա Աղաջանյանը, ժենյա Պողոսյանը, Կարինե Ավանեսյանը, Լաուրա Շակրյանը և Իննա Մկրտչյանը:

Ուղաննա ՄԵԼՔՈՒՄՅԱՆ,
Տարրական մամկ. և մեթոդիկա 3-րդ կուրս

թացքում թիմերի անդամները գուշակել են հայ, ուսւ, արտասահմանյան գրողների ստեղծագործությունների անունները:

«Խաղ-մրցույթի նպատակն էր ուսանողների մեջ ընթերցանության հանդեպ սեր առաջացնել, նպաստել գրքի և ընթերցանության քարոզչությանը», - ասել է ուսանողուհի Սոնա Սուսայելյանը՝ նշելով, որ նման միջցուառումները բարձրացնում են գրքի արժեքը:

Հաղթող թիմը պարգևատրվել է գրքով:



31 ՏԱՐԻ Է ԱՆՑԵԼ ՍՊԻՏԱԿԻ ԱՎԵՐԻՉ ԵՐԿՐՈՇԱՐԺԻՑ



31 տարի առաջ Սպիտակի ահեղ երկրաշարժը խախտեց Հայաստանի անդորրը: 1988թ. դեկտեմբերի 7-ին՝ տեղական ժամանակով ժամը 11 ամ 41 րոպեին, Հայաստանի մոտ 40 տոկոսը ընդգրկող տարածքում տեղի ունեցավ ավերիչ երկրաշարժ՝ էպիկենտրոնում 10 բալ ուժգնությամբ:

Հաշված վայրկյանների ընթացքում լրիվ կամ մասնակի ավերվեցին Սպիտակ, Լենինա-

կան, Կիրովական, Ստեփանավան քաղաքները, Սպիտակի, Ախուրյանի, Գուգարքի, Արագածի, Կալինինոյի, Ստեփանավանի շրջանների հարյուրից ավելի գյուղեր ու բնակավայրեր:

Զոհվեց 25 հազարից ավելի մարդ, 500 հազարը մնաց անօթևան: Շարքից դուրս եկավ բնակչությունի 17 տոկոսը՝ շուրջ 8 միլիոն քառակուսի մետր բնակելի տարածություն: Երկրաշարժից հետևանքով լրիվ կամ մասամբ ավերվեցին ավելի քան 230 արդյունաբերական օբյեկտներ՝ 82 հազար աշխատատեղով: Հայաստանի տնտեսությանը հասցած վճար կազմեց 13 միլիարդ ռուբլի:

Ցավը մեծ է, կորուստը անդառնալի: Բայց մենք իհմա կանք, որ խոնարիկնենք մեր անմեղ զոհերի հիշատակի առջև:

Ամեն տարի դեկտեմբերի 7-ին սգում է ողջ հայ ազգը, այցելում գերեզմանոցներ՝ փորձելով հանգստություն գտնել իրենց սրտերում:

Ամգելինա ԱԲՐԱՅԱՆՅԱՆ,
Լրագրություն 1-ին կուրս

ԴԵԿԵMBERԻ 10-Ը՝ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ

1950թ. ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ

առաջարկով որոշ պետություններ եւ կազմակերպություններ, ներկայումս՝ ամբողջ աշխարհը, դեկտեմբերի 10-ը նշում է որպես Սարդու իրավունքների պաշտպանության միջազգային օր: Մինչ այդ՝ 1948 թ.-ին, Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվեց Սարդու իրավունքների մասին համընդհանուր հռչակագիր, որում առանձնացված մարդու հիմնարար իրավունքները պետք է պաշտպանված լինեն բոլոր երկրներում եւ պետություններում՝ առանց խորականության:

Հոչակագրում առաջ քաշված իրավունքների եւ ազատության համընդհանուր ծանաչումն ու կիրառումը շարունակվում են մնալ որպես մի նպատակ, որի ուղղությամբ տարված քայլերը



ծառայում են հօգուտ մարդու իրավունքների եւ դրանց պաշտպանությանը:

Երկրագնդի վրա յուրաքանչյուր ոք պետք է զգա, որ իր իրավունքները պաշտպանված են:

Քրիստին ՂԱՐԱՍՍԱՆՅԱՆ,
Լրագրություն 1-ին կուրս

ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախում դիմամիկ տեմպերով շարումակում է զարգանալ մշակութային ոլորտը և տարեկան հարյուրավոր զբուաշրջիկներ տարբեր երկրներից այցելում են Արցախ՝ մշակույթին ծանոթանալու համար։ Արցախում շատ հաճախ են կազմակերպվում տարաբնույթ միջոցառումներ։

Տիշտ է, շատ ու շատ միջոցառումների անցկացման համար Արցախի պայմանները բավարար չեն, բայց Արցախը իր դիրքերը չի զիջում և շարումակում է մնալ ամենահետաքրքիր և ամենամշակութակիր երկրների ցանկում։ Դիմականում տարածված են համերգները, ցուցահանդեսները, փառատոնները, ներկայացումները, տարբեր բնագավառներում մրցույթները։ Ակսած 2015թ. մինչ այսօր ամեն տարի Արցախը Տող գյուղում մեծ շուրջով նշում է գինու փառատոնը։ Փառատոնը տեղի է ունենում ամենահարուստ, ամենագունեղ, ամենահամեղ տարվա եղանակին՝ աշնանը։ Զեկա մի այնպիսի տարի, որ գյուղացիները տարբեր գյուղերից չքերեն և մարդկանց չմատուցեն իրենց իսկ ստեղծած բերք ու բարիքը։ Այս տոնը կարծես թե ավանդույթ է դարձել արցախցիներին համար, և գնալով աճում է մասնակիցների թիվը։ Բացի կազմակերպվող գինու փառատոնից, կազմակերպվում է նաև թթվի, թթի, նռան փառատոնները։ Ստեփանակերտ քաղաքում քաղաքապետարանի նախաձեռնությամբ գրեթե ամեն տարի տարվա եղանակին համահունչ կազմակերպվում են միջոցառումներ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի բակում։ Աշնան համահունչ այս տարի կազմակերպվել է «Ոսկե աշուն» խորագործ միջոցառում։ Վերջին տարիներին Արցախում սկսել է զարգացում ապրել նաև քատրոնը։ Թատերասեր արցախցիների թիվը գնալով շատանում է։ Թատրոնը կազմակերպում է հետաքրքիր միջոցառումներ։ Եվ բացի այդ հյուրախաղերով Արցախում հանդես են գալիս ՀՀ և արտերկրյա մշակութային կոլեկտիվներ, երաժշտարվեստի և թատերարվես-



տի ճանաչված խմբեր ու արտիստներ։ Ի դեպ, նախարարի խոսքով՝ թատրոնը պիտի վերանորոգվի շատ շուտով՝ «Արցախ, իմ սեր.աշակենք Ստեփանակերտի թատրոնին» բարեգործական ծրագրի շրջանակներում։ Այս տարվա ամենագունեղ միջոցառումը Համահայկական 7-րդ ամառային խաղերի բացման հանդիսավոր արարողությունն էր, որը տեղի է ունեցել Արցախում։ Ամեն ինչ կազմակերպվել է բարձր մակարդակով, և ոչ մի մանրութ չի անտեսվել։ Համահայկական խաղերը մեծ հնարավորություն են տվել՝ Արցախը ևս մեկ անգամ աշխարհի ուշադրության կենտրոն դարձնելու և համայն հայությանը ևս մեկ անգամ Արցախում միավորելու համար։ Արցախի մշակույթի զարգացման գործում իրենց ներդրումներն ունեն Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջը, Սանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը, Կոմիտասի անվան երաժշտական դպրոցը, որտեղ կազմակերպվում են մշակութային գործ հետաքրքիր միջոցառումներ։ Այս ամենն, ինչ խոսք, Արցախի մշակութային կյանքը դարձում են գունագեղ և հետաքրքիր։

Անհիտ ԱՐՁՈՒՄԱՆՅԱ,
Լրագրություն, 1-ին կուրս

ԿԱՅԱՑԵԼ Է «ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԱՅԼ ԿԵՐՊ» ԽՈՐԱԳՐՈՎ ԱՐՑՈՒՅԹ

Շարումակում են Արցախի մայր բուի հիմնադրման 50-ամյակին նվիրված միջոցառումները։ Այս անգամ տեղի է ունեցել ուսանողների իմացական գիտելիքները ստուգող մրցույթ։ Դեկտեմբերի 5-ին կայացել է «Տնտեսագիտական այլ կերպ» խաղ-մրցույթը, որին ներկա էին ֆակուլտետի դեկանը, ամբիոնի վարիչներ և ուսանողներ։ Մրցույթը նախաձեռնել է ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության դեկանը Սարիամ Գևորգյանը։

«Տպատակ» էր բացահայտել ուսանողների՝ մասնագիտական տերմինների իմացության աստիճանը և ամրապնդել դրանք։ Նման մրցույթները նպաստում են նոր գիտելիքների ձեռքբերմանը, տրամարանական մտածողության զարգացմանը», - ասել է նա։

Մրցույթը ընթացել է 3 փուլով, որի ընթացքում թիմի անդամներից մեկը մյուսներին բացատրել է



բարտում նշված տնտեսագիտական 6 տերմինների բացատրությունը՝ առանց բարի արմատը և թարգմանությունը օգտագործելու։ Խաղի ընթացքում տրվել են նաև տրամաբանական հարցեր։

Հաղթող և նախակից թիմերը մյուսներին բացատրել են պատվորով և շնորհակալագրերով։

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱԽՈՂԵՐԸ ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԵՆ ԻՆՔՍՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՄԱՐՆԵՐԸ



«Տպատակ» բացական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողները «Օտար լեզու» դասընթացի շրջանակում ներկայացրել են ինքնուրույն աշխատամքները։ Միջոցառումը նախաձեռնել էր բանասիրական ֆակուլտետի ռոմանագիրմանական ամբիոնի դասախոս, մ.գ.թ., դոցենտ Նարինե Ռուբասանյանը։

Ուսանողները անգերեն լեզվով հանդես են եկել գեկույցներով՝ ներկայացնելով մասնագիտական թեմաներ, որոնք վերաբերում էին ՏՏ ոլորտի հայտնի գործիչներին, սոցիալական ցանցերին, նորարարական տեխնոլոգիաներին և այլն։

«Տպատակ» բացական գարգարացման ամբողջական լեզվի իմացությունը, կրեատիվ մտածողությունը, սեր առաջացնել օտար լեզուների հանդեպ։ Նման միջոցառումները հնարավորություն են տալիս ուսանողներին օտար լեզվով խոսել, քննարկումներ կատարել, որոնք նպաստում են ուսանողների բազմակողմանի զարգացմանը, հաղորդական, լեզվամտածողական կարողությունների զարգացմանը», - ասել է Նարինե Ռուբասանյանը՝ հավելելով, որ 2019-2020 ուսումնական տարվա առաջին կուրսեցիները լավ են տիրապետում օտար լեզվին և ցույց են տվել գոհացուցիչ արդյունքներ։

Խոսելով օտար լեզուներին տիրապետելու անհրաժեշտության մասին՝ դասախոսը նշել է, որ այն կարևոր է տարբեր մասնագիտությամբ սովորող ուսանողների համար՝ իրենց մասնագիտության մեջ միջազգային զարգացումներին հետևելու, այլալեզու գործընկերների հետ շփումների, միջազգային հարթակներում ներկայանալու, այլոց փորձին ծանոթանալու համար։